

785

Արարչական ազգիկն ու
խորհրդավոր վարպետ

855

Մ-35

Թիֆլիս 1913

85
89. 21-93
Մ-34

208 228

104

Հրահանգներ «ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» Հանրուրեան № 11

ՄԱՐԴԱԿԵՐԻ ԱՂՋԻԿՆ

ՈՒ

ԽՈՐՀՐԴԱԽՈՐ ՎԱՐՊԵՏԸ

ԻՏԱԼԱԿԱՆ ՀԷՔԻԱԹ



717 20 74

Ռուսերէնից թարգմ. Յովհ. Քումանեան

Թ Ի Ֆ Լ Ի Ձ
Էլէքտրատպարան օր. Ն. Աղանեանի, Պօլից. 7.
1913

891.71 Մ
Մ - 35
56

ՄԱՐԴԱԿԵՐԻ ԱՂՋԻԿՆ

ՈՒ

ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ՎԱՐՊԵՏԸ

ԻՏԱԼԱԿԱՆ ՀԻՔԻԱԹ

Ռուսերէնից թարգմ. Յովհ. Թումանեան

Յանքած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

Թ Ի Ֆ Լ Ի Ձ

Էլեքտրատպարան օր. Ն. Ազանեանի, Գոլից. 7.

1913



1002
ԸՆԳՐՈՒՄ

ՄԱՐԴԱԿԵՐԻ ԱՂԶԻԿՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՎԱՐՊԵՏԸ

Լինում է չի լինում, լինում ու չար որդին տեղը նստում է է մի թագաւոր. Ունենում է եր- թագաւոր:

Կու որդի, մինը բարի, միւսը Սրանց էստեղ թողնենք, գը- չար: Բարին լինում է մեծն ու նանք հիմի տեսնենք ինչ եղաւ ժառանգը: Էս բանը դուր չի գալի բարի եղբայրը:

Չար եղբորը, մտածում է՝ մի կեր- Բարի եղբայրը անտառի խոշ- պով ազատի բարի եղբորից, որ քում ուշքի է գալի, սկսում է ժամանակին ինքը թագաւոր դա- թառանչել ու օգնութիւն կանչել. նայ: Մի օր ասում է.

— Արի գնանք որսի:

— Օգնեցէք, ո՛վ Աստուած սի- թողներ... օգնեցէք...

— Թէ՛ գնանք:

Ճիւղերը ջարդատելով, խոտերը

— Գնում են: Մտնում են ան- խոտերը: Որ մտնում են ան- խոտի խորքը, թիկնապահները խոտերը քննում ու երկու եղբայր մնում են մենակ: Որ մնում են մենակ՝ էս չար եղբայրը սուրը հանում է՝ խրում է բարի եղբոր թիկունքը ու, կարծելով թէ ար- դէն սպանեց, վերադառնում է պալատը, իբրև թէ բան չի պա- տահել: Հէրը հարցնում է.

խրջխրջացնելով, մինը առաջ է գա- լի, տարածում է երկար ճանկե- ռով մազոտ ձեռքերը, վեր է քա- շում թագաւորի տղին ու հետը փշփշոտ լեզուով մէջքի արիւնը լիզում է հետը խուլ մրմուռ. — Օ՛ֆ, ի՛նչ համով է... օ՛ֆ, ի՛նչ համով է...

Էս խոպոտ ձէնից թագաւորի տղի հոգին մարում է: «Վայ ինձ, ասում է, մարդակերի ճանկն եմ ընկել»: Դու մի ասիլ, ճշմարիտ որ, ընկած է լինում մարդակերի ճանկը:

— Եղբայրդ ի՛նչ եղաւ:

Մարդակերը սրան մի բոխչի նման կռնատակն է առնում ու ճամփայ ընկնում դէպի իր քա- թափում, լաց ու սուգ է անում, րանձաւը:

— Ա՛խ, ասում է, ձերդ մեծու- թիւն, էնպէս մի դժբախտութիւն պատահեց, որ... Գազանները եղ- բօրս կերան...

Լօք-լօք անելով մի քանի րո-

Խեղճ հէրը աղի արտասուք է թափում, լաց ու սուգ է անում, դարդից հիւանդանում է մեռնում

2.2.2

պէսում հասնում է քարանձաւի դեղ է հանում, բերում է քսում դուռն ու ծեծում.

— Դուռը բաց արա, աղջիկ ջան, դուռը բաց արա, տես քեզ համար ինչ եմ բերել...

Աղջիկը որ դուռը բաց է անում, որ տեսնում է ուշաթափաւած ու արիւնաթաթախ թագաւորի տղին, խղճահարւում է, ասում է.

տղի վէրքին:


Տղէն աչքը բաց է անում, ասում է.

— Օ՛ֆ, էս ի՞նչ շատ եմ քնել:

Ու տեսնելով կողքին կանգնած աղջկանը՝ հարցնում է.

— Դու ո՞վ ես, սիրուն աղջիկ:

— Ես մարդակերի աղջիկն եմ, բայց ինձանից մի վախենար...



— Էստեղ ի՞նչ լաւ բան կայ իսկ դու ո՞վ ես...

որ... Չես տեսնում արդէն մեռած է... թող տանեմ դէն գցեմ...

— Ասենք ճշմարիտ ես ասում, արդէն դիակ է... Տար դէն գցիր, իսկ ես էլի կը գնամ որոնելու, ասում է հրէշ հէրն ու ձեռաց անհետանում:

— Ո՛ւ... ո՛ւ... միայն մոնչիւնն է լսում հեռից:

Հէրը հեռանում է թէ չէ՝ աղջիկը վազում է պահարանից մի

թագաւորի տղէն նոր յիշում է ու գլխի է ընկնում թէ որտեղ է ընկել, յայտնում է թէ ինքն ով է, պատմում է իր գլխին եկածը ու խնդրում է աղջկանը, որ թողնի իրեն՝ գնայ իր հօր մօտ:

— Քեզ ու քս հօրը սարեր ու ձորեր են բաժանում, պատասխանում է աղջիկը: Չես կարող նրան համես: Ճամփին կը բռնի իմ հէրը, երկու պատառ կանի,

կուտի քեզ: Էստեղից անփորձանք դուրս գալու-գնալու համար պէտք է ունենալ իմ հօր մատի կախարդական մատանին: Ես՝ նրա մատից, քնած ժամանակը, կը հանեմ էն կախարդական մատանին, միայն մի պայմանով, որ խօսք տաս միասին փախչենք ու ամուսնանաս ինձ հետ:

Թագաւորի տղէն խօսք է տալիս: Էս ժամանակ լսում է մարդակերի մոնչիւնը, — ո՛ւ... ո՛ւ... Որսը անյաշող էր անցել, բարկացած վերագառնում էր տուն:

— Շուտ արա, մտիր էս քունը, թաքնվիր, թէ չէ որ տեսաւ քեզ կուտի...

Աղջիկը թագցնում է տղին ու միամիտ նստում: Հէրը ներս է մտնում թէ չէ հոտոտում է ու կանչում.

— Օ՛ֆ, ի՞նչ լաւ մարդահոտ է գալի...

— Էդ քեզ է էդպէս թւում, ասում է աղջիկը: Մարդն էստեղ ո՞վ է տւել... Յոգնած ես, արի մի լաւ հաց կեր ու պառկի քնի:

Մարդակերը մըթմըթալով մի խորոված եզան կիսան է կլանում ու մեկնւում: Աղջկանն ասում է.

— Արի գլուխս քորի, որ քնեմ: Աղջիկը մի ձեռքով գլուխը քորում է, միւսով կամաց աշխատում է մատանիքը մատիցը հանի:

— Էդ ի՞նչ ես անում, աղջիկ

ջան, կէս քուն, կէս արթուն մըր-մոռում է մարդակերը:

Աղջիկը վախեցած, ձեռը ետ է քաշում ու էդ օրը էլ չի համարձակւում մատանին հանելու փորձ անել:

Իրիկնապահին մարդակերը նորից որսի է գնում, մնում են աղջիկն ու թագաւորի տղէն:

Աղջիկը քունը չից դուրս է բերում թագաւորի տղին ու նրա խնդիրքով ման է ածում իրենց սենեակները:

Մի դուռն է բաց անում — տղէն զարմանքից մնում է ապշած: Մի մեծ դահլիճ է լիքն ու զարգարւած ոսկով ու արծաթով, թանկագին քարերով ու մարմարով, բայց յատակին էստեղ էստեղ թափւած կրծոտած ոսկորներ:

— Էս ի՞նչ ոսկորներ են, հարցնում է թագաւորի տղէն:

— Ոսկորներ են էլի, պատասխանում է մարդակերի աղջիկն ու միւս դուռն է բաց անում: Մտնում են հեռեեալ սենեակը: Առաջինից աւելի փարթամ ու շքեղ: Պատերը մաքուր արծաթից, ոսկուց ու մարգարիտից, հրաշալի կահ-կարասիքով, ոսկենկար-ոսկեփունջ մետաքսի վարագոյրներով զարգարած: Բայց էստեղ էլ թափւած են նոյն կրծած ոսկորները...

— Էս ի՞նչ ոսկորներ են դարձեալ հարցնում է թագաւորի տղէն:

— Էդ ի՞նչ ես անում, աղջիկ

— Դրանց ի՞նչ ես նայում, կրր-
կին խօսքը կտուրն է գցում մար-
դակերի աղջիկը, դու ոսկէ պա-
տերին մտիկ տուր, արծաթէ ու
մարգարտէ ձեղուններին նայիր...

Ու առաջ է գնում:

Թագաւորի տղէն գլխի է ընկ-
նում, որ էդ ոսկորները էն խեղճ
մարդկանց ոսկորներն են, որոնց
լափել էր մարդակերը:

— Իսկ էս ի՞նչ սենեակ է, ցոյց
է տալիս թագաւորի տղէն մի
դռան վրա, որի երկու կողմը
հսկում էին երկու վիշապներ:

— Էս իմ հօր գանձարանն է:
Էս սենեակը չի կարելի է մտնել
առանց իմ հօր մատի կախարդա-
կան մատանիքի. թէ չէ՝ իսկոյն կը
պատառոտեն էս պահապան վի-
շապները:

— Ո՛ւ... Ո՛ւ...

Լսում է մարդակերի ահռելի
ոռնոցը:

— Շուտ արա, շուտ, թագնւիր,
ու շունչդ չը հանես մին էլ մինչև
իրիկուն, հէրս գալիս է, ասում
է աղջիկն ու կրկին թագցնում
թագաւորի տղին: Իսկ մարդա-
կերն արգէն դուռը ծեծում է.

— Բաց արա դուռը, աղջիկս,
բաց արա, քեզ համար տես ի՞նչ
եմ բերել:

Ապա թէ թագաւորի տղէն իր
թագնւած տեղից լսում է գոռո-
ցի ու լացի ձէն, հետն էլ բերա-
նի ծլբփոց:

Մարդակերն իր ընթրիքն անում
է ու պառկում է քնի, աղջկան
պատուիրում է գլուխը քորի:

Աղջիկն էս անգամ կարողանում
է հօր մատից հանել կախարդա-
կան մատանին, ապա տղի հետ
միասին առնում են մարդակերի
գանձերն ու փախչում: Շատ են
գնում թէ քիչ, շատն ու քիչը
Աստուած գիտի, հասնում են մի
աշխարհք: Էս աշխարհքում թա-
գաւորի տղէն իմանում է, որ իր
հէրը մեռել է ու նրա տեղը իր
ախպէրն է նստել թագաւոր: Ինչ-
պէս խօսք էր տւել, էնպէս էլ ա-
մուսնանում է մարդակերի աղջ-
կայ հետ ու մնում է էս աշխարհ-
քում:

Շատ են կենում թէ քիչ, մի
քանի երեխայ են ունենում, շատ
սիրով էլ ապրում են իրար հետ,
միայն կինը երբեմն գիշերները
անհետանում է ու ծէքին է վե-
րադառնում շրթունքները արիւ-
նոտ: Հարցնում է թէ.

— Էդ ի՞նչ ես կերել:

Թէ՛

— Ոչե՛նչ, հաւ ու գառն եմ կե-
րել, բերանս էլ դեռ հալա չեմ
սրբել...

Մի անգամ էլ էնպէս է պա-
տահում, որ էս թագաւորի տղէն
երեխաների հետ գնում է ուրիշ
տեղ, մութն ընկնում է ու մնում
են ճանապարհին: Գիշերւայ մի
ժամանակը մի գազան գողունի

մօտենում է ու յարձակում է
քնած երեխաների վրայ: Թագա-
ւորի տղէն սուրը հանում է զար-
կում. գազանը մարդու ձէնով ճը-
չում է.

— Վայ, մեռայ...

Չէնն էլ ծանօթ ձէն: Մտիկ
տայ՝ ի՞նչ տեսնի—սրով զարկած
առաջն ընկած իր կինը: Գիշերով
դուրս է եկել որս որոնելու, մըթ-
նումը չի նկատել—քիչ է մնացել
իր երեխաներին ուտի:

— Ահա թէ ինչ կը նշանակի,
լինել մարդակերի աղջիկ...

Ու մնում է խեղճ մարդը շւա-
րած, յուսահատուած կանգնած մէջ
տեղը: Մի կողմը ընկած արնա-
շաղախ կինը, միւս կողմը ծւա-
տած երեխաները:

Չը գիտի ինչ անի, ինչ շանի:
Էս գրութեան մէջ յանկարծ
լսում է մի քնքուշ ձէն.

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես
լաց լինում, թագաւորի որդի:

Գլուխը վեր է քաշում, տես-
նում է առաջը կանգնած ձերմակ
շորերով մի գեղեցկուհի:

— Ա՛խ, ասում է անման աղ-
ջիկ, օգնիր ինձ, տեսնում ես,
կինս, երեխաներս...

— Ես կարող եմ քեզ օգնել
միայն միայն մի պայմանով, խօ-
սում է գեղեցկուհին:

— Ի՞նչ որ ասես՝ յօժար եմ:

— Լա՛ւ, դէ լսիր: Ընս գիտեմ
ինչ է բերել քո գլուխը եղբայրդ,

գիտեմ ինչպէս ես ընկել մարդա-
կերի ճանկը, ոնց ես նրանից ա-
զատուել ու ամուսնացել նրա աղ-
ջկայ հետ, մի խօսքով ամենը
գիտեմ... Բայց եթէ ուզում ես
ես քեզ օգնեմ—պէտք է ներես
եղբօրդ...

— Եղբօրս... Օ՛, երբէք: Էս բո-
լորի պատճառը նա է... Չեմ կա-
րող, չեմ կարող նրան ներել...

— Չես կարող... Դէ՛հ, մնաս բա-
րեաւ:

Խոժոռում է գեղեցկուհին ու
շուռ է գալի, որ հեռանայ:

— Կաց, կանգնիր, կը ներեմ,
կանչում է տղէն, միայն թէ՛
օգնիր:

— Դէ լսիր, խօսում է ոգին:
Քո կինը արդէն մեռաւ, երեխա-
ներդ էլ ամենքը պիտի մեռնեն,
որովհետեւ մարդու միս են կերել,
բացէ՛ ամենափոքրը, ծծկերը:

Կախարդական մատանու ուժով
ամեն գիշեր քեզ քնեցնում էր քո
կինը ու ինքը գնում մարդի որսի,
ու որսի մսից ուտեցնում էր և
իր երեխաներին, ինչպէս գիշա-
կեր թռչունը կամ գազանը իր
արած որսից ուտեցնում է իր ձա-
գերին: Միայն ծծկերն է, որ մար-
դի միս չի կերել, և միայն նա
կապրի ու կը թագաւորի ապա-
գայում, եթէ միայն դու ներես
եղբօրդ...

— Ներում եմ, ասում է թագա-
ւորի տղէն:

— Դէ հիմի նայիր, շարունակում է հրաշալի կինը: Մեկնում է ձեռքի կախարդական գաւազանը, իրար ետևից թեթև գարկում է երեխաներին ու իրար ետևից երեխաները դառնում են հիւանդի գործիքներ, թափւում են գետնին—թակ, ունելիք, սղոց, դուր, իսկ ամենափոքրը, ծծկերը — շաղափ:

Ահից ու զարմանքից տեղն ու տեղը քար է կտրում լեեղճ հէրը:

— Մի վախենար ու մի յուսահատւիր, խօսում է ոգին: Էս օրւանից դու կը լինես վարպետ — հիւան, իսկ սրանք — քո գործիքները: Տերեկը քեզ համար գործիքներ կը լինեն — իսկ գիշերը հէնց կախարդական մատանիքով զարկես — կը դառնան քո երեխաները:

Թագաւորի տղէն հէնց էն տեղ թաղում է իր կնոջը, հետն առնում է թակը, ունելիքը, սղոցը, դուրն ու շաղափը, որ չի իմանում իր գաւազաններն են թէ գործիքները, ու ճանապարհ է ընկնում դէպի շար եղբօր քաղաքը: Չար եղբօր քաղաքում մի հա-



К. Спасский

Այժմ հաւաքիր էս գործիքները, գնա քո եղբօր քաղաքը, մի համեստ խանութ վարձիր ու մէջն աշխատիր, ինչպէս հասարակ աշխատաւոր, բանւոր հիւան: Նրանից յետոյ ինչոր կը պատահի — յետոյ կը տեսնես:

Ասում է ու չքանում չքնաղ կինը:

մեստ խանութ է վարձում ու աշխատում:

Շատ քիչ է վաստակում, բայց ապրում է ճոխ ու առատ: Հարևանները զարմանում են. չեն հասկանում թէ էս որտեղից է սա էսպէս հարուստ ապրում:

— Ամօթ չը լինի հարցնելը, վարպետ, էդքան քիչ աշխատե-

լով ի՞նչպէս ես կարողանում էսպէս լաւ ապրել...

Վարպետը պատասխանի փոխարէն իր բռնօթին է քաշում ու ուսերն է վեր քաշում:

Սրի ու սրանից բան հասկացիր: Մի խօսքով ոչ ոք չի հասկանում սրա գաղտնիքն, ու անունը դնում են «Խորհրդաւոր վարպետ»:

Մին էլ տեսար Խորհրդաւոր վարպետը մտազործի խանութը մտաւ:

— Ի՞նչ արժէ սուկին:

— Սուկին քեզ համար չի, վարպետ, սուկին թագաւորի համար է:

— Ինչո՞ւ. իմ փորն էլ թագաւորի փորի նման փոր չի ինչ է...

Մարդիկ ծիծաղում են.

— Կեցցես վարպետ, կեցցես, լաւ ասիր:

Գնում է ձկնավաճառի մօտ:

— Խաւեարն ի՞նչ արժէ:

— Խաւեարը քեզ համար չի, վարպետ, խաւեարը թագաւորի համար ենք պահել:

— Վահ, ինչո՞ւ. իմ ախորժակն էլ թագաւորի ախորժակի պէս ախորժակ չի ինչ է...

Չարմացած հարց է տալիս Խորհրդաւոր վարպետը ու նորից խալիւր ծիծաղում են.

— Կեցցես, վարպետ, կեցցես, ճիշտ նկատեցիր:

Ու ինչ էլ որ անում է՝ մսեղէն, ձկնեղէն, կանաչեղէն, ընդեղէն թէ մրգեղէն — առնում է

առատ առատ ու ամենաընտիրը: Էս ու էն հարցնում են.

— Էդ ո՞վ պէտք է ուտի, վարպետ:

— Ես ու իմ երեխէքը:

— Շատ երեխայ ունես:

— Ինչպէս չէ. Թակը, Սղոցը, Ունելիքը, Շաղափը:

Խալիւր ծիծաղում են.

— Անուշ լինի քեզ ու երեխաներիդ, վարպետ:

— Շնորհակալ եմ:

Վերադառնում է խանութ, գամբիւղով ուտելիքը դնում անկիւնում ու սկսում բանել մինչև իրիկուն:

— Հապա ճաշդ, ինչպէս պէտք է լինի, վարպետ:

— Ճաշս էնտեղ խոհանոցում կեփեն:

Գիշերւայ կիսին խանութը կողպում է, դուռը ետնափակ է տալի, ու իսկոյն ներսը ափսէները շրլշրլիկում են, բաժակները զրնգզրնգում են, դանակ-պառաքաղները չրխչրխում, կարծես թէ բազմաթիւ ծառաներ խանութում մեծ սեղան են բաց անում:

Ապա թէ լսում է ուրախ ծափ ու ծիծաղը, մէջ ընդ մէջ էլ Խորհրդաւոր վարպետի սաստող ձէնը.

— Սղոց, կարգին...

— Թակ, գգուշ, շիշը չըկտարես...

— Խելօք կացէք, շարութիւն մի անէք...



Հարեանները լսում են ու ապ- շում: Առաւօտը ցամաքած գա- լիս են:

—Հը, վարպետ, իրիկունը լաւ ընթրեցիք... Բայց ձեր երեխէքը բաւական չարութիւն են անում...

—Ձէ, էնքան էլ չար չեն, տե- սէք, ինչ խելօք շարւած են:



Պատասխանում է վարպետը ու ցոյց է տալիս պատի կողմը. իսկ պաշարեղէնի դամբիւղը, ճշմա- րիտ որ դատարկ է:

Հարեանները գլուխները տրա- քեցնում են, հագար ու մի են- թագրութիւններ են անում, ոչ մի կերպ չեն կարողանում իմա- նալ Խորհրդաւոր վարպետի գաղ- տնիքը:

Յերեկով մտիկ են անում—մի խեղճ մարդ է, մի փոքրիկ նեղ խանութում, դլուխը կախ իր բա- նի վրա: Ո՞րտեղից է սա էսքան փող աշխատում, էսքան ուտելիք առնում, և ո՞ւր է գնում էս ա- մենը... ինչ է նշանակում էս

աղմուկն ու շրթիկոցը, որ լսում է գիշերները...

Մտածում են՝ դուանը մի ծակ շինեն, որ էնտեղից գուցէ մի բան տեսնեն, էն էլ չեն կարողանում: Դուռը, որ թւում էր թէ փթած տախտակից է—ոչ մի բուրդու չի մօտ թողնում:

Չարմացած հարցնում են:

—Վարպետ, քո դուռն ինչից է շինած:

—Պանրից:

—Հապա ինչո՞ւ չես ուտում:

—Ես պանիր չեմ սիրում:

—Է՛ վարպետ, ինչու ես մեզ խաբում:

Իսկ վարպետը իր բռնօթին է քաշում ու խնդում:

Վերջապէս խաբարը գնում է հասնում իրեն— թագաւորին:

Թագաւորը բարկանում է:

—Հա՛, ո՞նց թէ իմ փորն էլ թագաւորի փորի նման փոր է...

Հրամայում է, որ մթերավա- ճառները ամենավատ մթերքները



տան յանդուզն վարպետին: Ու էլ, իր մեծամեծներն էլ չոր հացը թագաւորի հրամանը դուրս եկած օրից վարպետը պէտք է էն տե- սակ միս ուտէր, որ շունն էլ չէր ուտիլ, հոտած ձուկը, որդնած պանիր ու փթած պտուղներ:

—Հը, գոհես թէ չէ, վարպետ, ծաղրելով հարցնում են վաճա- սողները:

—Ես գոհ եմ, բայց էնպէսները կան, որ իսկի չեն կարող գոհ լինել...

—Ինչո՞ւ:

—Էնդուր:

Ասում է բռնօթին քաշում ու գնում իր խանութը:

Դու մի ասիլ հէնց էդ օրն էլ թագաւորը իր մեծամեծներին հրաւիրած է լինում հանդիսաւոր ճաշկերոյթի:

Սեղանին միս են բերում—լէշի հոտ է գալի, պանիր են գնում— էնքան որդնած, որ իրեն իրեն սեղանի վրա ման է գալի, պը- տուղները ճիճւտ, թթու, կա- նաչեղէնը փթած...

—Էս ինչ բան է, գոռում է թագաւորը. էստեղ կանչեցէք էդ լիրը խոհարարին:

Խեղճ խոհարարը երդում— է, թագաւորը հրամայել է, որ կրակն է ընկնում թէ ամենաըն- տիր մթերքն է առել, սրան նը- րան վկայ է բերում, թէ բոլոր ուտելիքները հրաշալի բուրում էին խոհանոցում...

Ինչ պէտք է անեն: Թագաւորն

էլ, իր մեծամեծներն էլ չոր հացը ջրումը թրջում են ուտում, որ սովամահ չը լինեն:

Կայ թէ չը կայ էս խորհրդա- ւոր վարպետի սարքած խաղն է, որ խաղում է մեր գլխին, կար- ծիք է յայտնում թագաւորի խոր- հրդականներից մինը: Կացէք, ես մի գնամ դրա մօտ:

Շորերը փոխում է, հին, մաշ- ւած շորեր է հագնում ու գնում:

—Բարի աջողում, վարպետ:

—Ասածու բարին քեզ:

—Վարպետ, մի նեղութիւն քա- շի՛ էս սնդուկը նորոգի:

—Շատ լաւ: Էստեղ դիր:

—Քեզ մօտ էս ինչ լաւ կերա- կուրի հոտ է գալի, վարպետ:

—Հա՛, երևի էն անկիւնի ճա- շի կրճոնքի հոտն է...

—Խորհրդականը էն կողմն է նայում, տեսնում է հիանալի ձուկն ու խորովուն—բերնի շուրջ վազում է:

—Էս հիանալի ուտելիքները որտեղ էք առել, վարպետ:

—Էստեղ, որտեղ ծախում են— շուկայում:

—Բայց, ինչքան ինձ յայտնի է, թագաւորը հրամայել է, որ քեզ վրա լաւ ուտելիք չը ծախեն, էս ինչպէս է, որ...

Վարպետը պատասխանի փո- խարէն բռնօթի է քաշում, ու- սերը վեր քաշում ու քթի տա- կին ծիծաղում:

էստեղից խորհրդականը վազում է թագաւորի մօտ: Թագաւորի մօտ մեծամեծները խորհրդի են հաւաքուում, խորհուրդ են անում ու վճռում են, որ Խորհրդաւոր վարպետը անպատճառ մի կախարգ է որ կայ ու նրանից պէտք է խել իր գործիքները—թակը, սղոցը, ունելիքը, դուրն ու շաղափը, մի խօսքով ամենը, ինչ որ ունի:

Ինչպէս որ վճռում են էնպէս էլ անում են:

Խորհրդաւոր վարպետի գործիքները բերում են թագաւորին նշարանին կից սենեակում փակում: Փակում են, բանալին տալիս թագաւորին: Թագաւորն էլ, ապահովութեան համար, բանալին կախում է իր գօտուց:

Մին էլ կէս գիշերին էս փակած սենեակում մի աղմուկ. թակը թակում է, թըխկ հա թըխկ, ունելիքը քաշում է, չըխկ հա չըխկ, սղոցը սղոցում է—խըռ հա խըռ, շաղափը ծակում է—վըռ հա վըռ, ապա թէ միասին ճչում են.—հաց ենք ուզում, հաց ենք ուզում...

Թագաւորը վազում է, դուռը բաց է անում, տեսնում է բոլոր գործիքները հանգիստ իրենց տեղերն ընկած են: Բայց դուռը փակում է թէ չէ—նորից սկըսում է լացն ու ճիչը.

—Հաց ենք ուզում, հաց ենք

ուզում...

էս-թագաւորն ամբողջ գիշերը չի կարում աչքը կայցնի: Երկրորդ գիշերը—աւելի թունդ:

Խորհրդականներն ասում են.— Թագաւորն ապրած կենայ, բեր ուտելիքներ դնենք էդ սենեակում տեսնենք ինչ գուրս կը գայ: Բերում են ուտելիքներ են դնում էդ սենեակում ու էլ եդ փակում:

Ականջ են դնում:

Ափսէները շըխկ շըխկում են, դանակներն ու պատառաքաղները շըխկ շըխկում, բաժակները զըրնգում: Ծափ, ծիծաղ, ճիչ, աղմուկ: Հետն էլ մինը թէ—Սղոց, դու ինձ բոթում ես:

Միւսը թէ.

—Շնորհակալ, մագերս մի քաշի: Երրորդը թէ.

—Դուր, էս ինչ արիւր, շորերիս վրա թափեցիր...

էս թագաւորն ու իր խորհրդականները զարմանքից մնում են քարացած:

Հրաշք, որ հրաշք է: Ինչ խօսք, որ Խորհրդաւոր վարպետը կախարգ է:

Թագաւորը հրամայում է, որ վարպետին իր մօտը բերեն: Բերում են: Ասում է.

—Վարպետ, էս ինչ բան է, որ քո գործիքներն ուտում են ու խօսում են: էս ինչ կը նշանակի...

Վարպետը պատասխանի փո-

խարէն բռնօթի է քաշում ու ուտերը վեր քաշում: Եւ ոչ մի խօսք: Թագաւորը կատաղում է: Ասում է.

—Եթէ իսկոյն էս գաղտնիքը իմ առջև բաց չես անել—գլուխդ կը թռչի:

—Ինչ գաղտնիք, ձերդ մեծութիւն. իմ երեխաներն են, ահա բոլոր գաղտնիքը:

—Հապա ինչու քո երեխաներն էս տեսակ տարօրինակ կերպարանք են առել, որ իսկի նման չի մեր կերպարանքին:

—Նրա համար, որ ինձ օգնեն, հաց աշխատենք ապրուստ անենք:

Թագաւորը հաւատում է վարպետի խօսքին ու հրամայում է, որ վերադարձնեն գործիքները: Միայն թէ հետն էլ պատւիրում է:

—Բայց զգոյշ կաց, վարպետ, միւս անգամ էլ չասես՝ իմ փորն էլ էնպէս փոր է, ինչպէս թագաւորի փորը և կամ թէ իմ ախորժակն էլ էնպէս ախորժակ է, ինչպէս թագաւորինը: Թէ չէ յետոյ շատ կը զըղձաս:

Վարպետը գնում է, նորից սկսում է իր գործը: Բայց հետզհետէ յաճախորդները պակասում են: Մարդիկ վախենում են նրա հետ գործ ունենալուց: Իզուր է նա փողոցները թափառում ու ամեն մի հինգ քայլի վրա կանչում. —Ահա վարպետը... վարպետը եկաւ, ում է շինելու բան հար-

կաւոր... ահա վարպետը...

էլ ոչ ոք գործ չի տալիս: էս ու էն հարցնում են:

—Վարպետ, հիմի Դնց ես ապրելու:

Վարպետը պատասխանի փոխարէն ուտերը թօթում է ու բռնօթի է քաշում:

էս թագաւորն ունենում է վեց երեխայ. երեք աղջիկ, երեք տղայ, մինը միւսից առողջ ու սիրուն: էս երեխէքն իրար ետևից հիւանդանում են ու մեռնում:

Բժիշկ, հէքիմ, դեղ, ճար— ոչ մի բան չի օգնում: Իրար ետևից մեռնում են:

Մեծ աղջիկը մեռնում է: Տանում են թաղելու: Մին էլ տեսնում են Խորհրդաւոր վարպետն էլ էն կողմից է գալի ուսին մի գազաղ:

—էդ, ո՞վ է մեռել ձեր տանը, վարպետ:

—Իմ Թակն է մեռել, իմ Թակը... տանում եմ թաղեմ:

Միւս անգամ թագաւորի տղղին են տանում թաղելու, դարձեալ հանդիպում է վարպետը ուսին մի ուրիշ գազաղ:

—էդ ո՞վ է մեռել, վարպետ:

—Իմ Դուրն է մեռել. տանում եմ թաղեմ:

էսպէս կարգով, քանի թագաւորի երեխաներից մէկին տանում են թաղելու, վարպետն էլ թաղում է իր գործիքներից մէկն ու

մէկը:

Թագաւորի խորհրդականը շատ խորամանկ մարդ է լինում: Թագաւորին ասում է.

— Չերդ մեծութիւն, տեսնում էք, որ ամեն անգամ ձեր երեխաները թաղելիս վարպետն էլ իր գործիքներէն մէկը կամ միւսն է թաղում: Սրա մէջ մի խորհուրդ կայ: Եւ եթէ չէք ուզում, որ ձեր բոլոր երեխաները մեռնեն—կանչեցէք Խորհրդաւոր վարպետին ու մի ձեռով նրա սիրտն առէք:

Թագաւորին էլ մենակ մի աղջիկ է լինում մնացած, ամենափոքրը, էն էլ վերջին շնչումն է լինում:

Ճարահատուած կանչում է վարպետին, աղաչանք, պաղատանք է անում.

— Վարպետ Աստու սիրուն, երկնքի սիրուն, քո երեխանց գերեզմանի սիրուն, խնդրում եմ, ազատիր աղջկանս:

Վարպետն էլ թէ.

— Չերդ մեծութիւն, խնդրում եմ ազատեցէք իմ Շաղափին:

Թագաւորը թէ.

— Ի՞նչպէս ազատեմ:

Վարպետը թէ.

— Դրա համար միայն մի ձար ու ձանապարհ կայ. ամուսնացնել էս երկուսին իրար հետ:

Թագաւորն աղջկայ սիրուց յօժարում է, բայց մտքումն ասում է, թող մի էս փորձանքն անց

կենայ, ես յետոյ սրան ցոյց կը տամ:

Սրա վրա թագաւորի աղջիկը լաւանում է:

Թագաւորը վարպետին ասում է.

— Ո՞ւր է քո Շաղափը, դէ բեր պսակենք իմ աղջկայ հետ:

Վարպետն ասում է.

— Թագաւորն ապրած կենայ. իմ Շաղափը առայժմ ցերեկով մնալու է իսկական շաղափ և միայն գիշերներն է տղայ դառնալու, ինչպէս որ նախասահմանուած է նրա համար:

— Էդ առայժմ, իսկ յետոյ:

— Յետոն էլ յետոյ կը տեսնենք, ինչ որ Աստուած կը կամենայ:

— Ուրեմն, առայժմ ամուսնութեան մասին չի կարող խօսք լինել:

— Չեր մեծութիւնը ինչպէս որ կը կամենայ:

Էսպէս մի քանի տարի անց է կենում: Թագաւորը շատ է ուրախանում, որ իր աղջկայ ու Շաղափի ամուսնութիւնը միշտ յետաձգուած է: Եւ սիրում է վարպետին ձեռք առնել:

— Հը՞, օնց ես, խնամի վարպետ. ախար բացի շաղափից էլ քեզ գործիք չի մնացել. օնց ես աշխատում, օնց ես ապրում: Ինքդ լաւ ապրուստի սովոր, մանաւանդ փորդ էլ նոյն փորն է, ինչ որ...

— Ինչ ապրուստ, ինչ աշխա-

տանք, Չերդ մեծութիւն. ամբողջ խրում բարի եղբօր թիկունքը... օրը նստած տղիս հէքիաթ եմ պատմում: Հիմի էս եմ շինել իմ բան ու գործը: Երէկ էլ մի շատ լաւը պատմեցի: Արդեօք ձեր մեծութիւնը հէքիաթ չի սիրում, չէր կամենայ մի լաւը պատմեմ— լսէր:

— Ինչու չէ. համեցէք, պատմիր, կը լսեմ:

— Չերդ մեծութիւն, ժուկով ժամանակով եղել է չի եղել, եղել է ձեզ նման մի թագաւոր, ունեցել է երկու որդի, մինը բարի, միւսը չար: Բարին եղել է մեծը ու գահի ժառանգը և հօր մահից յետոյ նա պիտի նստէր թագաւոր: Էս բանը դիւր չի գալի չար եղբօրը...

Թագաւորն էստեղ մռայլում է ու վարպետի խօսքը կտրում է.

— Վարպետ, քո հէքիաթը ինձ դիւր չի գալի:

— Դեռ լսեցէք, ձերդ մեծութիւն. ամենահետաքրքրական մասը հիմի կըսկսուի: Հա՛, էն էի ասում. չար եղբօրը դիւր չի գալի, որ հօր մահից յետոյ բարին պիտի թագաւորի. իր մէջը վճռում է գործը շուռ տայ էսպէս, ինչպէս ինքն է ուզում: Ու մի օր եղբօրն ասում է.— Սրի գնանք որսի: Գնում են: Անտառի խորքում թիկնապահները ետ են ժամանակը ու նրանք պիտի թա-

մնան: Որ թիկնապահները ետ են մնում սա սուրը հանում է

թագաւորն էստեղ աւելի է տակն ու վրայ լինում ու վարպետի վրա գոռում է.

— Ես ասի, որ քո հէքիաթը ինձ դիւր չի գալի, վարպետ...

— Մի քիչ էլ լսեցէք, հիմի ամենահետաքրքրական տեղը կը գայ, ձերդ մեծութիւն, մի քիչ էլ լսեցէք:— Չար եղբայրը որ զարկում է, կարծում է թէ բարի եղբօրն սպանեց, խոտով— խաշամով ծածկում է ու գնում: Գնում է տանը հօրն ասում, թէ եղբօրս անտառում գազանները կերան...

Էստեղ թագաւորը տեղիցը վեր է թռչում՝ աղաղակում.

— Ուրեմն դու իմ եղբայրն ես... ներիք, ներիք ինձ, եղբայրս...

Աղաղակում է ու դողդողալով ընկնում խորհրդաւոր վարպետի ոտները: Ասում է.

— Ինձ մի պատժի, եղբայրս, ինձ մի պատժի... Ահա քո թագը, ան, նստիր մեր հօր գահին ու թագաւորի:

— Ոչ ես պէտք է թագաւորեմ ոչ դու, պատասխանում է Խորհրդաւոր վարպետը. իմ Շաղափը կը լինի թագաւոր, քո աղջիկը թագուհի: Մեր ժամանակն անց է կացել. այժմ նրանցն է ժամանակը ու նրանք պիտի թագաւորեն:


Բերում են վարպետին հագ-



ցընում են իր առաջև իշխանական զգեստները ու գնում են նաև իրար, իրար ներում ու սի-
 Շաղափի ետևից: Բայց Շաղափն ընդ, իսկ Շաղափն ու թագա-
 էլ շաղափ չէր արդեն. կերպա-
 րանափոխել, դարձել էր մի սի-
 րուն պատանի:

էստեղ երկու եղբայր գրկում
 ընդ, իսկ Շաղափն ու թագա-
 ւորի գեղեցկունի աղջիկը ամուս-
 նանում են ու թագաւորում ու-
 ըախ ու բախտաւոր:

Հ.Ս.Խ.Է. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
 С.С.Р.А. Публичная Библиотека
 7/31 - 1922
 ИМЕНА, ИСЧИСЛ. НА
 *У. ՄՅԱՍԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ



„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Գաստրուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Ա.Թ.
Խնկոյեանի 25 կ.
2. Մէյրի—Դերձակի աշակերտը, վօդըւիլ. 10 »
3. Աղւէան ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—
պսակ—պատկերազարդ հեքիաթներ 10 »
4. Ս. Գալաշեան — Կապիկներ, բնագիտական
զրոյց 10 »
5. Մարկ Տւէն—Մահւան օղակը. պատմաձօք,
Թարգմ. Մ. Թաւաքալեանի 7 »
6. Կ. Ստանիսկովիչ—Պստիկ նաւաստին. պատմ-
աձօք, Թարգմ. Սիմակի 5 »
7. Մարգար Աւետիսեան—Երեք խրատ. Պղնձէ
քաղաքի զրոյցներէց 20 »
8. Է. Սէտուն-Տումպուն—Վինիպեկի գայլը. պատ-
մաձօք հերոս կենդանիների կեանքից, Թարգ-
մ. Սիմակի 20 »
9. Լ. Պրայս եւ Զ. Ջելլերտ—Առասպելական հե-
րոսներ. Թարգմ. Գ. Իփէկեան 20 »
10. Ռուբէն Գաբրիէլեան—Ովկիանի թագաւորը.
Կէտի մասին, բնագիտական զրոյց 10 »
11. Մարգակերի աղջիկն ու խորհրդաւոր վար-
պետը. Իտալական հէքիաթ. Ռուսերէնից
Թարգմ. Յովհ. Թումանեան 10 կ.

Դիմել «Հասկերի» խմբագրութեան. Тифлисъ,
редакция „Аскеръ“:

Ձրի յաւելում «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

0004886

2013



